66. ԻՐԵՔ ՄԱՏՈՒՐՆԵՐ*

Կէղնի, չէղնի տղեմ՝ կէղնի, կէլնա կէրթա խուրբաթ։

Կըսե.—Կէրթամ խուրբաթ, աշխատիմ։ Ուխտ էղնի առաջի ասո, ինչ օր աշխատիմ, բերիմ կես իտամ աղքատաց։ Մըկել կես նոր ընձի տ՝էղնի։

Կէրթա մեկ ըզ Արզրում քաղաք աշխատութեն կէնե տարիմ՝, էրկուս։ Աստվածութեն իրեն խսմաթ կիտա, հըրիրմ՝ օսկի կաշխատի։

Ցեբ օր կաշխատի հըրիմ՝ օսկի, կըսե.—Հերք է աշխատիմ։ Վոլա կէլնամ կէրթամ էրկիր։

Մարդ հըրիր օսկի կառնե կէլնա քաղքից դուրս, կիշե օր մատուրմ՝ կէղնի։ Կըսե.—Քընց զէդա խեղճ էլ վիր իտամ։ Էն օր ուրիշիմ՝ կիտամ, կիտամ իդա խեղճին,—կէլնա հ՝իսուն օսկին կիտա ըդ մատուրին, հ՝իսուն օսկի կմնա ուր մոտ։

Ըդհաղս կըսի մատուր տղին.—Տուր զքու փային իշիմ, քումն է շատ, թե՝ իմին։

Մատուրը կխարե զտղեն, կառնե զփարեն ուր ձեռք։

Ըդ հաղս ձեն կէնե, թե «Հ՝իդա տղեն իկեր է, զիմ փարեն·

---

* Այս գժվարընթեռնելի հեքիաթը յուրահատուկ վերջաբան ունի, որն առնչվում է հայ ժողովրդի տարագրության հանգամանքին (Ս. Կ.)։

կխլե տանե։ Կխժա-կիլա, հմալ օր ասկարմ՝ ասկար ժողովուրդ կթափին կիզան։

Ասկրրներն էկան, բռնին զտղեն, ծեծեցին.—Է՛, դու զմատուրի փարեն ի՞մալ կխլիս։

Տղեն բողոք էրեց ըս ասկրրնուն, ամա չընցավ ուր բողոք։

Մատուր առավ զփարեն, խնդացավ ու քելից։ Գնաց զուր հ՝օդի դուռ բացեց, տղեն լէ հ՝ետևեն հետ գնաց։

Մատուր խնդացավ ու մտավ ներս։ Խնդանալուն զդուռ չփակեց, տղեն լէ մտավ ուր ետևեն ներս։

Մատուրն օր մտավ ներս, ըսավ.—Բղիկ, օսկի, խնդացի, հարիր օսկի լէ բերեցի։ Խնդանելուն՝ քուն բռնեցավ քնավ։

Տղեն օր տեսավ զօսկիք լցեց բղկի մեջ, պատավ ու քնավ։ Գնաց առավ զբղիկ պատի միջեն ու իջավ։ Հ՝էլավ դուրս։ Պոռաց մատուրին, ըսեց.—Հ՝էլի, հերիք է քնիս։ Բղիկ օսկին լէ գնաց ու հարիր օսկին լէ։

Մատուր քնուց հ՝էլավ ու հմա դուռնվե վազից։

Ըսեց.—Հե՛յ վախ ու հե՛յ վախ։ Ի՞մալ զդուռ չփակեցի, օր ըդի մտավ ներս, զիմ փարեն առավ գնաց։

Ըսեց.—Հըմալ չէղնի, բըդ էրթամ բողոքիմ։ Քելեց քիչըմ՝ դեն գնաց, ուրիշ մատուրմ՝ ռաստ էկավ ուրին, քիսան հ՝իրար։

Ընի ըսավ.—Հ՝օ՞րի քիսար ընձի։ Բղիկ օսկու տեր ըսեց.—Ընձի դարդ կա։ Բղիկմ՝ օսկի տարեր ին, քիսա, դու հ՝ո՞րի քիսար։

Ըսեց.—Ասված զքու խելք առնե քու գլխեն, զփարեն իմա՞ը բղկի մեջ կպահիս։

Ըսեց.—Կիշե՞ս, իմ փարեն իդա փետի մեջն է. իմ ձեռք կառնիմ օր մարդ չգինա։

Ըն տղեն օր բղիկ օսկիքն էր ձեռք, կանուկ էր ըդուց ետև։ Մատուրն օր ըդ հմալ ըսեց, թոցուց զբդ մատուրի փետն ու փախավ։ Օր փախավ, ըդ էրկու մատուր զիրար դրեցին դրբի հ՝առջև։

Հետի մատուրն ըսեց.—Օր դու չէղներ, զիմ փետ լէ իմ ձեռքեն չըն տանե։ Իմ փարեն հ՝ըմեն փետի մեջն էր լցուկ։

Ըդ էրկու մատուր հ՝ընկան ճամբեն։

Ըսին.—Էրթանք գանգատ էնինք։ Կիգան ճամբու կես։ Մատուրմ՝ լէ ընդիեն կիգա։ Կիգան ու կքիսնա ըդոց։ Ընդոք լէ կըսին.—Էյ դու քո՞ռ իս, էկար քիսար մըզի։ Մըլե մըզի գարդ չէր մըր ճամբու հետ կքելենք։ Քըզի ի՞նչ դարդ կէր, օր էկար քիսար մըզի։

Կրսե.—Զրզի ի՞նչ դարդ կա, մատուր ախպրտա՜նք, ընձի պատմեք։

Կրսեն.—Մրզի ի՞նչ դարդ կա։ Ընձի բզիկմ՝ օսկի կեր։

Մրկել լէ կրսեր.—Ընձի փետի մեջ օսկի կեր լցուկ։ Զրմբր էրկուսի փարեն լէ տղեմ՝ տարավ։

Ըդ տղեն գնաց, կանուկ էր ըդուց հ՝ետև։

Ըսեց մատուրն.—Աստված զձրր խելք առնե,—ըսեց,—դուք իմա՞լ կբերիք զփարեն կրլնաք բզկի մեջն ու փետին։

Ըսին.—Ըպա քու փարեն հ՝ուր է լցուկ։

Ըսեց.—Կտեսնաք հա՜, քոլսի մեջն է։

Ըդպես օր ըսավ, տղեն հ՝ետևն էր, օր լսեց, հրմա առավ զքոլոս ու փախավ։

Դրեցին իրեք լէ զիրար հ՝առջև դրբին ու ծեծին զիրար։

Ընի ըսեց.—Ըպա, դուք եք, դուք օր չէղնեք՝ զիմ փարեն հ՝ո՞-րի կտանեն, հո՞րի էկաք, քիսաք իս, օր ես լէ կանա խոսացի ձրր հետ ու զիմ փարի տեղ ցուցցի ձրզի։

— Հրմալ է, ախպեր, էրթանք գանգատ,—ըսին էրկու մա-տուրն։

Ըդ իրեք մատուր զիրարու խոսք մեկ էրին։ Էլան գացին հյուք-մաթ՝ գանգատ։

Առաջ ըն հ՝առջի քոռից հարցուց հուքմաթ, թե.—Իմա՞լ էղավ։ Զարդարութին խոսա, որ զքու դատ տեսնամ։

Հ՝առջի քոռ ըսեց.—Հալ ու քեֆյաթ հրմլա բան մ՝էղավ իմ գլուխ։ Ըն հ՝առջի քոռ զուր գլխու գալիք զրմեն պատմեց հուք-մաթին։

Հուքմաթն հ՝առջի քոռուց օր հարցուց թրմավ, ըս անգամ ըն մրկէլ քոռուց հարցուց, թե.—Իմա՞լ զքու փարեն տարան։

Ըդ մատուր լէ զուր գլխու գալած պատմեց։ Թե հրմլա էղավ։

Զրդ էրկուսին օր հարցուց թրմավ, ըդհաղ ըն հ՝ետի մատու-րից հարցուց, ըսեց.—Դու լէ զքու դարդն ըսե, տեսնամ ի՞նչ է։

Ըսեց մատուրն, թե.—Հետա էրկու քոռեր էկան առան ընձի։ Հերսոդանք հ՝իրարու վրեն։ Էդոնք ըսին ընձի՝ «Հլե մզի դարդ կա, որ հ՝էլեր ինք կօլորդինք, քրզի ի՞նչ է էղի օր հ՝ընկեր իս ըս սո-խրխներ»։ Ըդոք իմալ օր հ՝ոդա ձզի պատմեցին, հրմալ լէ ընձի ըսին։ Ես լէ ցուցցի զիմ փարեն, թե՝ իմ քոլսի մեջն է։ Հրտ իմ ըսելուն, մեկ առավ զիմ քոլոսն ու փախավ։

Ըդոնք օր ղուրանց պատմութին էրին թըման, ըս անգամ հյուքմաթն տղից հարցուց. —Օղո՞րդ է, ղբու փարեն առեր է ըդ մատուր։

— Հա՛, օղորդ է,—կըսե տղեն։

Հուքմաթն օր ղըդոնց պատմութեն ղըմեն կիմնա, զիրեք մատուր լէ սուճլու կմանե, կթալե բռնատուն։ Զփարեն ղըմեն կիտա ըդ տղին օր ուր հըլալ քրտինքն էղի։ Ըդ տղեն է, զփարեն օր կառնե, հըմա ըդ տեխեն կէլնա ու քշե էրկիր։ Կիգա կհասնի ուր քուլֆրտի մեջ։ Իմալ օր ըդ տղեն դարձավ ուր տուն։ Հասավ ուր մուրադին, ասված ղմղի լէ բարով խերով հ'էդա խարիբութենից ազատե, տանե մըր էրկիր։

Ամեն։